

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«\_\_\_\_\_» \_\_\_\_\_2025թ.

N -Ն

**ՈՐՈՇՈՒՄ**

**ԵՐԵՎԱՆԻ ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ  
ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» օրենքի 14.3-րդ հոդվածի 5-րդ մասը, 17-րդ հոդվածը, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման պահանջները՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Նոր Նորք վարչական շրջանի գոտիավորման նախագիծը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

## ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### «ԵՐԵՎԱՆԻ ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ «ԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևանի զարգացման 2019 թվականի ծրագրի հաստատման մասին» N46-Ա և Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան քաղաքի 2019 թվականի բյուջեի մասին» N47-Ն որոշումների՝ նախատեսված է Նոր Նորք վարչական շրջանի գոտիավորման նախագծի մշակում:

Նախագծի նպատակն է մշակել Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի գոտիավորման նախագիծ (այսուհետև՝ Նախագիծ)՝ Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի մայիսի 22-ի «Երևանի Նոր Նորք վարչական շրջանի գոտիավորման նախագծի մշակման քաղաքաշինական առաջադրանքը հաստատելու մասին» N 97-Ա որոշման համապատասխան:

Համաձայն «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14.3 հոդվածի 5-րդ մասի և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի՝ Նախագիծը հաստատում է համայնքի ավագանին:

Նախագիծը, Երևանի քաղաքապետարանի N«ԵՔ-ԳՀԸԱՇՁԲ-19/68» պատվերով, մշակվել է «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի կողմից՝ Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի մայիսի 22-ի N97-Ա որոշման հաստատված նախագծային առաջադրանքի հիման վրա:

«ԼԱՎՈ» ՍՊԸ-ի կողմից 2024 թվականի սեպտեմբերի 16-ին Նախագիծը ստացել է «Երևանի Նոր Նորք վարչական շրջանի գոտիավորման նախագծի» հ.108/1-20/24 (ի լրումն 108/1-20 փորձաքննության եզրակացության) փորձաքննության դրական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, որպես հիմնադրությամբ փաստաթուղթ՝ գոտիավորման նախագծի համար կազմակերպվել են հանրային քննարկումներ: Իրականացվել է նախագծային փաստաթղթի և ՇՄԱԳ հաշվետվության ուսումնասիրության, գնահատման և վերլուծության արդյունքով նախատեսվող գործունեության վերաբերյալ պետական փորձաքննական եզրակացություն տալու գործընթաց: Փորձաքննական գործընթացի արդյունքներով 2023թ-ի փետրվարի 7-ին տրվել է N ԲՓ N 0016-23 փորձաքննական դրական եզրակացություն:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14.3 հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ նախագծի վերաբերյալ առկա է ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2025 թվականի փետրվարի 4-ի հ.2 դրական եզրակացությունը:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

## ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ



Երևան 2025 թ.

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ**  
**«Երևաննախագիծ» ՓԲԸ**

**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ԵՔ-ԳՀԸԱՇՁԲ-19/68»**

**ԵՐԵՎԱՆԻ ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ**  
**ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ**  
**ՏԵՔՍԱՅԻՆ ՄԱՍ**

**Տնօրեն**

**Ա Սեդոյան**

**Երևան 2025 թ**

**Հեղինակային խումբ՝**

**Տնօրեն՝  
Ճարտարապետ՝  
ՆԳՃ-գետ՝  
Ճարտարապետ՝  
Ճարտարապետ՝  
Ճարտարապետ՝  
Ճարտարապետ՝  
Ճարտարապետ՝  
Ճարտարապետ՝**

**Ա. Սեդոյան  
Ս. Օհանյան, ճ.թ, պրոֆ.  
Ա.Սողոմոնյան  
Զ.Մամյան, ճ.թ, պրոֆ.  
Ա. Ստեփանյան  
Ա. Մանասյան  
Ա.Մխիթարյան  
Գ. Մանուկյան  
Կ.Այվազյան**

**Ճարտարագետներ՝**

**Գ. Մադաթյան  
Ս.Սահակյան  
Ա.Ասրիյան  
Հ.Ավագյան  
Ա.Գալոյան**

**Ճանապարհային հաղորդակցուղիներ՝**

**Շրջակա միջավայրի պահպանություն՝**

# ՆԱԽԱԳԾԻ ԿԱԶՄԸ

## ՏԵՔՍԱՅԻՆ ՄԱՍ

### Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Նախագծի մշակման հիմքերը, ելակետային նյութերն ու տվյալները.....	9
2. Քաղաքաշինական այլ փաստաթղթերի և հողերի օգտագործման սխեմաների հետ փոխադարձ կապը, գոտիավորման նախագծի հիմնական դրույթները, նպատակը, գոտիների սահմանների որոշման սկզբունքները.....	9
3. Տարածքների փաստացի օգտագործման և նախագծային հաշվեկշիռները .....	10
3.1. Տարածքի փաստացի օգտագործումը .....	11
3.2. Բնակլիմայական պայմանները .....	13
3.2.1. Լանշաֆտ.....	13
3.2.2. Կլիմա.....	13
3.3. Ինժեներատեխնիկական և սեյսմատեկտոնական պայմաններ.....	14
3.3.1. Տեղամասի համառոտ բնութագիրը.....	14
3.3.2. Երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքը.....	14
3.3.3. Տարածքի հիդրոերկրաբանական պայմանները.....	15
3.3.4. Ինժեներական պաշտպանական միջոցառումներ տարերային վտանգավոր երևույթներից.....	16
3.3.5. Մակերեսային հակաջրողումային միջոցառումներ.....	17
3.3.6. Հականստվածքային միջոցառումներ .....	17
3.3.7. Խախտված հողերի վերականգնում.....	17
3.3.8. Հակասելավային, հակադեֆլյուցիոն, հակաջրհեղեղային առուցվածքներ և միջոցառումներ.....	18
3.4. Ճանապարհային հաղորդակցուղիների ցանց և կարգավորող գծեր.....	18
3.5. ճարտարագիտական ենթակառուցվածքներ.....	19
3.5.1. Ջրամատակարարում.....	19
3.5.2. Կենցաղային և հեղեղատար կոյուղի.....	20
3.5.3. Ջերմամատակարարում.....	23
3.5.4. Գազամատակարարում .....	23
3.5.5. Էլեկտրամատակարարում .....	24
3.6. Կանաչապատում.....	25
3.7. Հողօգտագործման արդի վիճակը .....	26

3.8. Հատակագծատարածական կազմակերպում, գոտիավորման և կառուցապատման հայեցակարգ.....	27
3.9. Տարածքների փաստացի օգտագործման և նախագծային հաշվեկշիռները .....	29

**Բ. Սահմանված գործառնական գոտիները, դրանցում թույլատրելի օգտագործման /կառուցապատման/ ձևերը ու կառուցապատման չափորոշիչները.....**32

**Գ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պահպանության, անվտանգության, սպասարկման /այդ թվում սերվիտուտներ/, սանիտարական և այլ գոտիներով /ծածկող գոտիներ/ պայմանավորված գործառնական գոտիներում թույլատրելի օգտագործումների սահմանափակումները և դրանց հիմնավորումները:.....**35

**Դ. Նոր նորք վարչական շրջանի քաղաքաշինական կանոնադրությունը /ըստ ձև 1-ի/.....**46

**Ե. Գոտիավորմանը չհամապատասխանող կառուցապատման կարգավորմանն ուղղված միջոցառումները.....**105

**Զ. Նոր նորք վարչական շրջանի հուշարջանների պահպանմանը, վերականգնմանը, վերակառուցմանն ուղղված միջոցառումները.....**107

**Է. Պահպանության, անվտանգության, սպասարկման, սանիտարական և այլ գոտիներում իրականացվելիք միջոցառումները.....**136

**ԳՐԱՖԻԿԱԿԱՆ ՄԱՍ**

Նախագծի գրաֆիկական մասում տարածքի փաստացի օգտագործման հիմքի վրա ցույց են տրված՝

1. Բնակավայրի զարգացման համար անհրաժեշտ հողատարածքներն ու դրանց կառուցապատման հերթականությունը՝ **Հենակետային հատակագծի և Հողատարածքների կառուցապատման հերթականության ուրվագծի** գծագրերում,
2. Տարածքի գործառնական գոտիները և դրանց տարբերակող նշանները՝ **Հիմնական գծագրում**

3. Տարածքի ծավալատարածական գոտիավորումն՝ ըստ կառուցապատման չափորոշիչների տեսակների և դրանց տարբերող նշանների՝ **Տարածքի բաժանում թաղամասերի գծագրերում և տեքստային մասի աղյուսակներում, հատվածային սխեմաներում:**
4. Բնակավայրի կազմավորված քաղաքաշինական միջավայրի վերակառուցման, արդիականացման, կառուցապատման առկա պահուստների օգտագործման առաջարկությունները **Հողատարածքների կառուցապատման հերթականության ուրվագիծ** գծագրում,
5. Տարածքի կառուցապատումը կարգավորող նախագծային կարմիր, կառուցապատման և այլ գծերը՝ հանգույցների կոորդինատային նշահարմամբ **Կարմիր գծեր** գծագրում,
6. Պատմամշակութային հուշարձանների զբաղեցրած տարածքները և պահպանական գոտիները **Հիմնական գծագիր** և **Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների տեղակայման հենակետային հատակագիծ, Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանական գոտիներ** գծագրերում
7. Ճանապարհային հաղորդակցուղիների ցանցը և դասակարգումը **Ճանապարհային ցանցի դասակարգում** գծագրում
8. Մշակութային, սոցիալ-կենցաղային սպասարկման ենթակառուցվածքները՝ սպասարկման գոտիների սահմաններով **Հիմնական գծագրում,**
9. Ինժեներական և կոմունալ ենթակառուցվածքների տարածքների գոտիները **Հիմնական գծագրում**

### **Գծագրերի ցանկ**

1. Հենակետետային հատակագիծ
2. Հիմնական գծագիր
3. Տարածքի բաժանում թաղամասերի
4. Հողատարածքների կառուցապատման հերթականության ուրվագիծ
5. Կարմիր գծեր
6. Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների տեղակայման հենակետային հատակագիծ



- 6.1. Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների առաջարկվող պահպանական գոտիներ
- 7. Ճանապարհային ցանցի դասակարգում
- 8. Գազամատակարարման միջին ճնշման խողովակաշարերը
  - 8.1 Բարձր լարման էլեկտրահաղորդման գծերը
  - 8.2. Ջրամատակարարման մայրուղային խողովակաշարերը
  - 8.3 Կոյուղու և հեղեղատարների մայրուղային խողովակաշարերը
- 9. Ռիսկերի և սահմանափակումների քարտեզ

## Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### 1. Նախագծի մշակման հիմքերը, ելակետային նյութերն ու տվյալները

Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի գոտիավորման նախագծի աշխատանքները կատարվել են Երևանի քաղաքապետարանի պատվերով (պայմանագիր N ԵՔ – ԳՀԱՇՁԲ – 19/68):

### 2. Քաղաքաշինական այլ փաստաթղթերի և հողերի օգտագործման սխեմաների հետ փոխադարձ կապը, գոտիավորման նախագծի հիմնական դրույթները , նպատակը, գոտիներիսահմանների որոշման սկզբունքները

- Նախագծման համար ուղեցույց են ծառայել հետևյալ նորմատիվային և նախագծային փաստաթղթերը.
- Հայաստանի Հանրապետության օրենքը՝ քաղաքաշինության մասին,
- Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրքը,
- Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգիրքը,
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքը, (ընդունված է 2014 թվականի հունիսի 21-ին, ՀՕ-110-Ն),
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշումը,
- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կադաստրային քարտեզները,
- Երևանի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի N 204-Ն որոշմամբ հաստատված Գլխավոր հատակագիծը
- Երևան քաղաքի տարածքների գոտիավորման և առաջնահերթ շինարարության կառուցապատման էսքիզների նախագիծ (պայմանագիր N ԱՇՁԲ 08/129, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինություն» ՓԲԸ, 2008թ.):


Նախագծում հաշվի են առնված նաև «ՍԵՄԱԹ»-ի Եվրոպական մայրցամաքի կայուն զարգացման հիմնադրային սկզբունքների, «Օրիուսի կոնվենցիայի, Եվրոպական լանդշաֆտային կոնվենցիայի», Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի» և այլ փաստաթղթերի միջոցառումներն ու սկզբունքները:

Նախագծի մշակման հիմնական նպատակը տարածքի հեռանկարային տնտեսական զարգացման և տարածքային աճի ուղղությունների, տարածքների գործառնական նշանակության որոշումն է՝ տրանսպորտային, ինժեներական, տեխնիկական ենթակառուցվածքների սկզբունքային լուծումներով, բնապահպանական լայն համալիրի կիրառումով, տարածքների հողօգտագործման և կառուցապատման պարտադիր պահանջների սահմանումով:

### **3. Տարածքների փաստացի օգտագործման և նախագծային հաշվեկշիռները**

#### **3.1. Տարածքի փաստացի օգտագործումը**

Նոր Նորք վարչական շրջանը գտնվում է Երևանի հյուսիսային և հյուսիս-արևելյան հատվածներում: Համայնքի ընդհանուր տարածքը կազմում 1459.03 հա, բնակչությունը կազմում է 135682 հազ. մարդ: Գոտիավորման նախագծում հաշվի են առնվել հաստատված և գործող քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերում, ինչպես նաև հողօգտագործման սխեմաներում ներառված դրույթները, այդ թվում Երևան քաղաքի ավագանու կողմից 2024 թվականի սեպտեմբերի 10-ի N 204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի Գլխավոր հատակագիծը:



նկար 1.

**Նոր Նորք վարչական շրջանի դիրքը քաղաքում**

**Նոր Նորք վարչական շրջանի տեղակայման հիմնական ցուցանիշներ**

Աղյուսակ Ա.3.1.1.

N	Տարածքը հա	Բնակչության թվաքանակը տարեվերջին հազ. մարդ	Վարչական շրջանն ընդհանուր սահմաններ ունի հետևյալ վարչական շրջանների հետ	Արտաքին սահմանագծով հարում է	Ընդգրկում է հետևյալ թաղամասերը
1.	145903	135682	Ավան, Կենտրոն, Էրեբունի, Նորք-Մարաշ, Քանաքեռ-Զեյթուն	Արարատի և Արմավիրի մարզերին	Նոր Նորքի զանգվածներ, ջրվեժի Բանավան, Մայակ թաղամասեր

**Նոր Նորքի վարչական շրջանի հատակագծատարածական զարգացման հիմնական  
ցուցանիշները ըստ 2024թ-ի տվյալների**

**Նոր Նորք վարչական շրջանի բնակչության թվի ցուցանիշները**

**Այուսակ Ա.3.1.2.**

Hh	Վարչական շրջաններ	Մշտական Բնակչության թվաքանակն ըստ ՀՀ մարդահամարների			Մշտական բնակչություն, 01.01.- ի դրությամբ*	
		2001թ.	2011թ.	2022թ.	2023 թ.	2024 թ.
	<b>Ընդամենը՝ ք.երևան</b>	<b>1 103 488</b>	<b>1 060 138</b>	<b>1 086 677</b>	<b>1 088 646</b>	<b>1 106 302</b>
1	Նոր-Նորք	141 895	126 065	134 668	134 769	135 682

Նոր Նորք վարչական շրջանը սահմանակից է Քանաքեռ-Զեյթուն, Կենտրոն, Մարաշ, Ավան, Էրեբունի վարչական շրջաններին:

Վարչական շրջանի տարածքը սահմանափակված է արևմուտքից Մարաշ թաղամասով (բնակելի կառուցապատման գծով և գերեզմանատան սահմանագծով), հյուսիս-արևմուտքից՝ Կենտրոն և Քանաքեռ- Զեյթուն, հյուսիսից՝ Ավանով, Դավիթ Մայրանի փողոցով, հյուսիս արևմուտքից՝ Մյասնիկյան պողոտայով և Գետառի կիրճով, հարավից՝ Դավիթ Բեկի փողոցով, արևելյան սահմանը սահմանակից է Կոտայքի մարզին:

Ընդգրկում է Նոր Նորքի 1-ից 9-րդ զանգվածները և Ջրվեժի «Բանավան» ու «Մայակ» թաղամասերը: Նոր Նորք վարչական շրջանը կազմավորվել է 1966 թվականին: Այս համայնքում է գտնվում [մայրաքաղաքի](#) ամենաբարձրադիր վայրը՝ [Սուրբ Սարգսի եկեղեցուն](#) հարևանությամբ ու ծովի մակարդակից 1370 մետր բարձրությամբ:

Նոր Նորք վարչական շրջանում կան 671 բազմաբնակարան շենք, հանրակրթական 20 և 1 հատուկ գիշերօթիկ դպրոց, Անանիա Շիրակացու անվան ճեմարան, 22 մանկապարտեզ, 2 քոլեջ, 1 արհեստագործական ուսումնարան, կենտրանական գրադարան, մշակույթի կենտրոն, 1 երաժշտական և 1 արվեստի դպրոց, Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտը, 4 մարզադպրոց, ուսումնամեթոդական, գիտաարտադրական կենտրոն, [«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնը](#), 3 պոլիկլինիկա, Ֆ.Նանսենի անվան թանգարանը, գործում են 2 գիտահետազոտական ինստիտուտ, շինարարական 58 և տրանսպորտային 34 ձեռնարկություններ, 11 կապի հանգույց, 4 գետնանցում, 3 լողավազան, 19 մարզահրապարակ, 24 ապաստարան:

Քաղաքի պատմամշակութային արժեքներից համայնքում կան 29 հուշարձան, 10 կոթող, 15 արձան, 6 տապանաքար. 4 խաչքար և 1 ջրանցք:

Նոր Նորքում են գտնվում Ջրաշխարհը, Ավանգարդ-Մոթորսը, Եվրոթերմը, Հայ կուլան, Գապեքսը, Գաջ ԲԲԸ, Ավտոմատիկա, Վան, Կոնեկտ, Էլեկտրոնաշ, Պրոգրես, Լազերային

տեխնիկա, էլտե պիրկալ, Սիգարոն, Նեյրոն, Սելենա և այլ գործարաններ ու ձեռնարկություններ:

### **3.2. Բնակլիմայական պայմանները**

#### **3.2.1. Լանդշաֆտը**

Համաձայն Երևան քաղաքի հաստատված 2024 թ. Գլխավոր հատակագծի Երևանի տարածքը բաժանված է 4 ուղղաձիգ լանդշաֆտային գոտիների կամ լանդշաֆտային տիպերի.

- չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով,
- կիսաանապատային՝ անապատների տարրերով,
- անապատային՝ կիսաանապատային տարրերով,
- ցածրադիր մարգագետնային:

Ջրվեժի սարավանդի, Ավանի գոգավորությանը և Քանաքեռի հրաբխային սարավանդի լանդշաֆտային պայմանները պատկանում են առաջին տիպին:

Քաղաքի շրջակա բնական միջավայրի հետ քաղաքային կառուցապատման կապի սխեմայի համաձայն Նոր Նորք վարչական շրջանի կառուցապատման 91% գնահատվում է որպես բարենպաստ: Շրջանի դիրքը բարենպաստ է նաև բնակեցված գոտու բաց տարածքների ուղղվածության աստիճանով, որը կազմում է 75%:

#### **3.2.2. Կլիման**

Ընդհանուր առմամբ Նոր Նորք վարչական շրջանի տարածքի կլիման կրում է արտահայտված ցամաքային բնույթ՝ շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները: Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային

Առանց սառնամանիքների ժամանակաշրջանը կազմում է 213 օր, առանձին տարիներին տատանվելով 163-ից մինչև 234 օր: Օդի միջին ջերմաստիճանն ըստ բարձրության տատանվում է 11.5–12°C: Բացարձակ նվազագույն ջերմաստիճանը դիտվել է հունվարին՝ մինուս 30 °C, բացարձակ առավելագույնը՝ հուլիս-օգոստոս ամիսներին՝ + 42 °C:

Տարածքի կլիման աչքի է ընկնում չորայնությամբ: Գարնան ամիսներին (մարտ – մայիս) դիտվում են մինչև 150 մմ տեղումներ, հունիս – սեպտեմբեր ամիսները խիստ չորային են՝ մինչև 64 մմ: Տեղումների տարեկան քանակը տատանվում է 286 մինչև 353 մմ:

Ամռանը օդի հարաբերական խոնավությունը կազմում է 49% – 53%, ձմռանը՝ 73% - 76%, գարնանը՝ 57% – 61% և աշնանը՝ 51% – 70%:

Տարածքի համար բնորոշ քամու ուղղությունը հյուսիս-արևելյան է: Ձմռան ամիսներին հաճախակի դիտվում են հանդարտ և թույլ քամիներով եղանակներ, ինչը ռելիեֆի գոգավորության պայմաններում նպաստում է սառը օդի լճացմանը: Հունվար ամսին հանդարտ օրերի թիվը կարող է կազմել 45% – 75%:

### **3.3. Ինժեներաերկրաբանական և սեյսմատեկտոնական պայմաններ**

#### **3.3.1. Տեղամասի համառոտ բնութագիրը**

Տարածքի սահմաններում ռելիեֆի հիմնական տարրերն են հանդիսանում Կոտայքի և Ջրվեժ-Նորքի հրաբխային սարավանդի լանջերը, ինչպես նաև Գետառ գետի կիրճը:

Ուսումնասիրվող հատվածը ներկայացված է տարբեր տեսակի ինժեներաերկրաբանական հատկանիշներով օժտված, փոխարից մինչև կիսաժայռային և ժայռային ապարներով: Ժայռային գրունտները՝ դոլերիտային բազալտներ, անդեզիտա-բազալտներ և տեղ-տեղ դրանց վրա տեղադրված կիսաժայռային նստվածքներ՝ տուֆեր, առանձնանում են մեծ ամրությամբ, բայց ունեն տեղադրման տարբեր պայմաններ և դրանց հետ կապված ճեղքավորվածություն:

Գետահովտի լանջերը կազմված են բազալտային և անդեզիտա-բազալտային լավաներից, զառիթափ են:

Հետազոտվող տարածքի գեոմորֆոլոգիական պայմանները բարդ չեն:

Ժամանակակից ռելիեֆը մասնակի ժառանգել է հին ռելիեֆի ձևերը:

Հետազոտվող տարածքում պայմանականորեն առանձնացվել են հետևյալ հիմնական գեոմորֆոլոգիական տարրերը.

Ա - Հարթ տարածքներ:

Բ - Բլուրներ:

Գ - Թեք հողմնահարման լանջեր:

Դ - Գետերի հուներ, ողողահուններ, ձորակներ:

#### **3.3.2. Երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքը**

Տարածքի երկրաբանական կառուցվածքում, ըստ ծագման, կազմի և հասակի, մասնակցում են տարբեր ապարներ՝ վերին պլիոցենից մինչև անտրոպոգեն.

- Կավ խայտաբղետ, պնդից մինչև ձիգ պլաստիկ թանձրության, խճի, մանրախճի, ճալաքարի և կոպճի պարունակությամբ:
- Ավազակավ շագանակագույն, գորշավուն և մոխրագույն երանգներով, պինդ, կիսապինդ, ձիգ, տեղ-տեղ փափուկ պլաստիկ թանձրության, կավավազի և ավազի ենթաշերտերով և ոսպնյակներով, քարակտորների պարունակությամբ մինչև 35%, մակրոձակոտկեն և խիտ: Տարածումը համատարած է, հզորությունը տատանվում է 0.8-8.0 մետրի սահմաններում:
- Ենթաշերտերով հաճախակի կարբոնատային և աղային: Կավավազն ունի լայն տարածում, գոյություն ունի տարածքի տարբեր մասերում, հզորությունը տատանվում է 0.5-6.0 մետրի սահմաններում,
- Կավավազ բաց և մուգ մոխրագույն, գորշավուն երանգով, պինդ և փափուկ պլաստիկ թանձրության մինչև 35% քարակտորների պարունակությամբ, փոշենման ավազի

- Ավազ տարահատիկ, ներկայացված է նաև փոշենման տարատեսակով. բաց դեղնավուն, շագանակագույն և մոխրագույն գույնի տարբեր աստիճանի ցեմենտացած և խտացած, կավային գրունտների ոսպնյակներով և ենթաշերտերով: Հզորությունը տատանվում է 2.0-10.0 մետր և ավելի սահմաններում:
- Խճա-մանրախճային գրունտ մեծաբեկորների պարունակությամբ, ավազային և կավային լցանյութով մինչև 30-35%, կավերի և ավազների ենթաշերտերով և ոսպնյակներով: Քարաբեկորները ներկայացված են հրաբխային ապարներով: Տարածումը համատարած է, հզորությունը տատանվում է մինչև 1.5 մետրի սահմաններում: Ճալաքարա-կոպճային գրունտներ գլաքարերով, ավազային և կավաավազային լցանյութով մինչև 35-40%, տարբեր հղկվածության կավային գրունտների ենթաշերտերով ու ոսպնյակներով: Հզորությունը տատանվում է 1.0-2.0 մետր և ավելի սահմաններում:
- Բազալտ, անդեզիտա-բազալտ, մուգ մոխրագույն, տեղ-տեղ վարդագույն, խայտաբղետ, խարամացած, անհամաչափ ծակոտկեն, տեղ-տեղ մեծաբեկորային, ջարդոտված, հողմնահարված խճի աստիճանի հրաբխային խարամի և ավազի ենթաշերտերով ու ոսպնյակներով, խոռոչային և զանգվածային: Բացահայտված հզորությունը 15.0-20.0 մետր, Գետառ գետի հովիտներում դրանց հզորությունը գերազանցում է 15 մետր:
- Խարամ, ավազ հրաբխային, խայտաբղետ գույնի (կարմիր, մոխրագույն, վարդագույն և այլն) խճա-մանրախճային և ավազային կազմի, խարամացած, ծակոտկեն խոռոչային բազալտների, անդեզիտա-բազալտների մեծաբեկորներով: Տարածումը սահմանափակ է:
- Տուֆ հրաբխային, որի գույնն է աղյուսակարմրից մինչև սև գույնի, մեծաբեկորային անջատումներով, ծակոտկեն, ճեղքավորված, հողափոխ տարատեսակների ենթաշերտերով, հիմքում տուֆային ավազներով: Հզորությունը տատանվում է 1.0-7.0 մետրի սահմաններում:

### **3.3.3.Տարածքի հիդրոերկրաբանական պայմանները:**

Նոր Նորք վարչական շրջանի տարածքում ստորգետնյա ջրերը կապված են հետևյալ երկրաբանական և մորֆոկառուցվածքային տարրերի հետ.

- Ջրեր հրաբխային սարավանդների սահմաններում,
- Գետառ գետ:

Հրաբխային սարահարթի սահմաններում գտնվող ջրերը կապված են ռելիեֆի ծածկված գետահովիտների և ռելիեֆի մյուս «բացասական» հին ձևերի հետ: Սարավանդի սահմաններում դրանք տեղադրված են երկու հատվածներում 0-2մ. Խորության վրա և `20.0-30.0 մետրից խորության վրա: Այս ջրերը բեռնաթափվում են Գետառ գետի մեջ:

Տարածքում առանձնացված տեղամասերի գրունտներում սպասվող առավելագույն հորիզոնական արագացումների արժեքները կազմել են`



- 0.25g - 0.30g
- 0.30g - 0.35g
- 0.35g - 0.40g
- 0.40g - 0.45g

Ելնելով տարածքի շինարարության համար պիտանելիության աստիճանից, ինժեներական նախապատրաստական աշխատանքների ծավալներից և բնույթից, ինչպես նաև հիդրոերկրաբանական պայմաններից, գեոմորֆոլոգիական հատկանիշներից և լիթոլոգիական կառուցվածքից, ուսումնասիրվող տարածքում առանձնացվել են երեք ինժեներաերկրաբանական շրջաններ.

- բարենպաստ
- պայմանական բարենպաստ
- անբարենպաստ:

### **3.3.4. Ինժեներական պաշտպանական միջոցառումներ տարերային վտանգավոր երևույթներից**

Տվյալ բաժնի դրույթները սահմանված են համաձայն Երևան քաղաքի հաստատված 2024 թ. Գլխավոր հատակագծի նախագծի: Համաձայն նշված աշխատանքի, տվյալ հատվածների համար տարերային (բնածին) վտանգավոր երևույթների առաջացումը, զարգացումը և համապատասխան սպառնալիքները պայմանավորված են տվյալ տարածքի ռելիեֆի բնույթով, երկրաբանալիթոլոգիական առանձնահատկություններով, հիդրոերկրաբանական պայմաններով, ինչպես նաև անտրոպոգեն (տեխնածին) տարբեր հանգամանքներով՝ անկանոն հողհանումներ, ռելիեֆի, հատկապես թեք լանջերի կտրվածքներ, գրունտների արհեստական ջրհագեցումներ, անհաշվենկատ մակերեսային ջրողողումներ:

Ինժեներական պաշտպանական միջոցառումները նպատակաուղղված են տվյալ տարածքի առանձին տեղամասերի, ինչպես նաև տարբեր կառուցվածքների վրա ազդող տարերային վտանգավոր երևույթների կանխարգելմանը, վերացմանը կամ դրանց՝ նվազեցմանը, պաշտպանական առավել արդյունավետ և շահավետ միջոցառումների կիրառմամբ:

Անհրաժեշտ է նաև տվյալ տարածքի և օբյեկտների տեխնիկական վիճակի ռեժիմային հսկողություն (մոնիտորինգ)՝ ինժեներական միջոցառումների թե իրականացման, և թե դրանց շահագործման փուլերում:

Վտանգավոր երևույթներից տարածքին բնորոշ են՝

- մակերեսային ջրողողումներ, հատկապես սեզոնային առատ տեղումների փուլում,
- գերնստեցումային, ենթաողողումային հատկանիշներ դրսևորող գրունտների (սպիտակահողեր) առկայությամբ պայմանավորված քաղաքաշինական վտանգավոր երևույթները:

### **3.3.5. Մակերեսային հակաջրողողումային միջոցառումներ**

Նախագծվող տարածքի տարբեր տեղամասերում մակերեսային ջրահոսքերը էլյուվիալ-դելյուվիալ ծագման գրունտների վրա առաջացնում են մակերեսային, երբեմն խորքային էրոզիոն երևույթներ:

Ջրողղման ենթակա տեղամասերում պաշտպանական միջոցառումները իրականացվում են կախված ջրողղման բնույթից՝ մշտական, սեզոնային, էպիզոդիկ, ինչպես նաև հասցվող վնասի (ռիսկի) մեծությամբ:

### **3.3.6. Հականստվածքային միջոցառումներ**

Գրունտների նստեցման հիմնական պատճառը կայանում է նրանում, որ ջրի ներգործության տակ քայքայվում են գրունտի կառուցվածքային կապերը, առաջանում է հոսունություն և կտրուկ խտացում սեփական կամ արտաքին ծանրության ճնշման տակ: Հիմնականում այդ խտացումը ավարտվում է մի քանի րոպեում և այդ պատճառով գրունտի սեղմման, նստեցման պրոցեսն ունի «անկման» բնույթ:

Գերնստման հատկանիշներով գրունտները ջրհագեցումից (խոնավացումից) պաշտպանելու նպատակով անհրաժեշտ է,

- շինարարական հրապարակները հատակագծելիս բացառել տեղումնային և ձնհալքային ջրերի մուտքը ,
- նախատեսել և իրականացնել ջրամեկուսիչ ծածկոցներ ինչպես շենքերի շրջակայքում, այնպես էլ դրանց ներսում,
- հուսալիորեն մեկուսացնել ջրատար խողովակները,
- կառուցվածքների հիմնատակերը տեղադրել ավելի խորը, ոչ նստվածքային գրունտների վրա,
- կիրառվում է նաև նստվածքային գրունտների տափարակում կամ դրանց մասնակի փոխարինում այլ, ավելի կայուն, գրունտներով:
- համայնքի կոմունալ ծառայությունները պարտավոր են վերահսկել կառուցապատված տարածքները և անսարք ջրատար խողովակներով արտահոսքեր հայտնաբերելու դեպքում շտապ միջոցառումներ ձեռնարկել:

### **3.3.7. Խախտված հողերի վերականգնում**

Տարածքի առանձին տեղամասերում ռելիեֆը փոփոխված է՝ հիմնականում շինարարական գործընթացներով: Արդյունքում խախտվել են այդ միջավայրերի բնապահպանական պայմանները, մասնավորապես այդ տեղամասերի բուսա-բնահողային ծածկոցները:

Տեխնածին փոփոխված ռելիեֆով այդ տեղամասերում անհրաժեշտ է իրականացնել ռեկուլտիվացիոն համալիր (բազմակողմանի) աշխատանքներ՝ ինժեներա-շինարարական, ագրոմերատիվ, ինչպես նաև կանաչապատմանն ուղղված խախտված հողերի վերականգնմանը:

### 3.3.8 Հակասելավային, հակադեֆյուկցիոն, հակաջրհեղեղային կառուցվածքներ և միջոցառումներ.

Սելավներից, ջրհեղեղներից տարածքների, շենքերի և շինությունների ինժեներական պաշտպանության համար կիրառվում են հետևյալ կառուցվածքները և միջոցառումները.

- սելավաուղղիչ կառուցվածքներ՝ սելավային հոսքը դեպի սելավաթող կառուցվածքներ ուղղելու համար, ուղղիչ և պատող դամբեր, կարճապատնեշներ,
- սելավականխիչ կառուցվածքներ՝ սելավ առաջացնող հորդացումների կանխման համար,
- գոյություն ունեցող հակասելավային միջոցառումների և կառուցվածքների վերականգնում և նորոգում:

Ավան-Առինջ սելավատարի (20 հազ.մ<sup>2</sup> հայելու մակերեսով և 20 հազ. մ<sup>2</sup> ծավալով) սկզբնամասը քայքայված է, սելավատարը մասնակիորեն քանդվել է, որոշ հատվածներ օտարման գոտիներով զավթվել են և ինքնակամ կառուցապատվել:

Անմխիթար վիճակում է գտնվում Գետառ գետի հունը:

Առաջարկվում է գետի հունը ամրացնել բետոնե տաշտակով՝ ստեղծելով հնարավորություն հետագայում անհրաժեշտության դեպքում այն ծածկելու համար:

### 3.4. Ճանապարհային հաղորդակցուղիների ցանց և կարգավորող գծեր

Ճանապարհատրանսպորտային մասով, բացի գոյություն ունեցող կարմիր գծերի հստակեցումից և ճշգրտումից, ինչպես նաև նոր ճանապարհների և փողոցների կարմիր գծերի սահմանումից, կարևորագույն միջոցառումներից մասնավորապես առաջարկվում է.

- Իրականացնել նոր «Թևոսյան փ - Ս.Խանզադյան փ (Նորք-Մարաշ վ.շ.)» տրանսպորտային կապ **2000մ** երկարությամբ (որից մոտ **1480մ** Նոր Նորք վ.շ. սահմաններում), որի երկայնքով նաև կառուցել **երկու ուղեանց**՝ անցնելով Գայի պողոտան Բ.Մուրադյան փողոցին միացնող նախագծային կամուրջի տակով և Գյուրջյան փողոցը հատելով (ընդգրկված է՝ նաև Երևան քաղաքի 2025-2032թթ Գլխավոր հատակագծի «ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒՐՎԱԳԻԾ» բաժնի առաջնահերթ միջոցառումների ցանկում): Սա թույլ կտա համալրել նախագծային «Թևոսյան փ - Դավիթ Անհաղթ փ(Արաբկիր վ.շ.)» կապը, ինչը զգալիորեն կթեթևացնի ներկայումս բարձր ծանրաբեռնված Գայի պողոտայի եթրևեկությունը,
- Իրականացնել Ճանապարհափողոցային տրանսպորտային կապ, կառուցելով **նոր կամուրջ 170մ** երկարությամբ (ընդհանուր վերակառուցման ենթակա տարածքի երկարությունը՝ **400մ**)՝ Գայի պողոտան միացնելով Բ.Մուրադյան փողոցին (ընդգրկված է նաև Երևան քաղաքի 2025-2032թթ Գլխավոր հատակագծի «ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒՐՎԱԳԻԾ» բաժնի առաջնահերթ միջոցառումների ցանկում),

- Վերակառուցել Դրոյի հրապարակը (Բ.Մուրադյան փ - Դավիթ Բեկի փ - Միկոյան փ - Շոպրոնի փ խաչմերուկ) շրջանաձև շարժման երթևեկությամբ,
- Իրականացնել նոր փողոցային կապ Շոպրոնի փողոցից հարավ-արևմուտք ուղղությամբ դեպի Դավիթ Բեկ փողոց **3540մ** երկարությամբ:

Բացի այդ՝ «Թևոսյան փ - Գայի պող - Բ.Մուրադյան փ» և «Թևոսյան փ - Գյուրջյան փ» նախագծային հանգույցների համար նախատեսվել են ընդլայնված կարմիր(կարգավորող) գծեր, նպատակ ունենալով կանխել հետագայում վերոհիշյալ այս երկու կարևոր ուղեբաժանքերի շինարարության կազմակերպմանը խանգարող հողահատկացումների հնարավորությունը:

### **3.5. Ճարտարագիտական ենթակառուցվածքներ.**

#### **3.5.1.Ջրամատակարարում**

Երևան քաղաքի Նոր-Նորք համայնքի ջրամատակարարման համակարգը սնվում է Կաթնաղբյուրի ջրաղբյուրներից, Փ700մմ տրամաչափի երկու ջրատարների օգնությամբ, որոնք ջուրը հասցնում են Ջրվեժի 1414 նիշի վրա գտնվող 7500խմ տարողության և 1377 նիշի վրա գտնվող 10000խմ տարողության օրվա կարգավորման ջրամբարներ:

Ջրամբարներում պահվում են հրդեհի, վթարների ժամանակ օգտագործելու և օրվա ընթացքում սպառումը կարգավորելու համար անհրաժեշտ ջրի պաշարներ:

Անցած տարիների ընթացքում, համաշխարային բանկի առաջին վարկային ծրագրով կատարվել է ջրի ծախսի հաշվառման համակարգ և աշխատանքներ Նոր- Նորք, Կենտրոն և Արաբկիր համայնքների ջրի բաշխիչ ցանցերի գոտիավորման ուղղությամբ: Նոր- Նորք համայնքի ջրամատակարարման բաշխիչ ցանցը գոտիավորելու շնորհիվ շուրջօրյա ջրամատակարարմամբ է ապահովվել բնակչության մոտ 80%-ը, մնացածի համար ջրամատակարարումը իրականացվում է օրական 8-14 ժամ գրաֆիկով:

Ներկայումս Երևան քաղաքի Նոր Նորք համայնքի ջրամատակարարման համակարգի հիմնական տեխնիկական տվյալներն են.

- արտադրվող ջրաքանակը 0.248 մ<sup>3</sup>/վրկ:
- Ջրատարների և բաշխիչ ցանցերի մոտ 60 %-ի տարիքը գերազանցում է 50 տարին և ենթակա են վերակառուցման,
- օրվա կարգավորման ջրամբարները տեղակայված են 2 կետերում, գումարային 17.5 հազ. խոր. մ. ծավալով:
- հոսակորուստների մակարդակը մոտ 75% է,
- ջրամատակարարումը իրականացվում է օրական 8-24 ժամ գրաֆիկով:

Համակարգի վերակառուցման ժամանակ պետք է հաշվի առնվեն արտակարգ իրավիճակներում կայուն ջրամատակարարման ապահովումը: Այս առումով նախատեսվում են.

- օրվա կարգավորման ջրամբարներում հակահրդեհային և վթարային պաշարների պահում,
- յուրաքանչյուր թաղամասի և այլ սպառողների ջրամատակարարման ապահովումը մեկից ավելի աղբյուրներից,
- արտակարգ իրավիճակներում աղբյուրները իրարով փոխարինելու հնարավորություն,
- բաշխիչ ցանցերը պետք է լինեն գոտիավորված, օղակային և ապահովված լինեն հակահրդեհային հիդրանտներով:

### **3.5.2. Կենցաղային և հեղեղատար կոյուղի**

Նոր Նորք համայնքի կենցաղային կոյուղու համակարգը սկսվել է ձևավորվել կառուցապատման հետ զուգընթաց: Կոյուղու ցանցի շինարարությունը կատարվել է նորակառույց շենքերի, թաղամասերի և արդյունաբերական օբյեկտների պահանջները բավարարելու սկզբունքով:

Ներկայումս համայնքն ամբողջությամբ ընդգրկված է կոյուղու ցանցում: Համայնքի ռելիեֆը թույլ է տալիս կեղտաջրերը հավաքել ինքնահոս եղանակով:

Գործող կոյուղու ցանցի թողունակությունը բավարար է, քանի որ ելքերը հաշվարկվել են 600 լ /մարդ/ օր ջրօգտագծման նորմի, զարգացած և ինտենսիվորեն զարգացող արդյունաբերության համար:

Ձևավորված ցանցով համայնքի տարածքը բաժանված է 2 ավազանների, որոնց հիմնական մայրուղիները համայնքից կեղտաջրերը դուրս են բերում և թափում Դավիթ-Բեկ և Մյասնիկյան փողոցներով դեպի կոյուղաջրերի մաքրման կայան գնացող կոլեկտորների մեջ:

Համայնքի կոյուղու ցանցի վիճակը մեղմ ասած բավարար չէ: Ցանցի ավելի քան 60%-ի տարիքը 50-նն անց է և սպառել է աշխատանքային ռեսուրսները:

Ձափման համակարգի բացակայության պատճառով արտահոսքի իրական մեծությունը առ այսօր որոշված չի:

Կոյուղու հավաքող ցանցի անկատարության և մաքրման կայանի չգործելու պատճառով, տարածքի որոշ կետերում կեղտաջրերը առանց որևէ մշակման թողնվում են Զրվեժ, Ողջաբերդ, Գետառ, ձորակներ:

Ինչպես արդեն նշվել է, ներկայումս թե մայր- կոլլեկտորները, թե հավաքող ցանցերը գտնվում են վատ տեխնիկական վիճակում թե անորակ նյութերի ու շինարարության, և թե աշխատանքային ռեսուրսները սպառելու հետևանքով:

Հավաքող ցանցերը բազմաթիվ կետերում միացված են հեղեղատար կոյուղուն, որի պատճառով անձրևների և ձնհալքի ժամանակ անձրևաջրերը մուտք են գործում կոյուղու ցանց:

Կոյուղու ցանցի աշխատունակությունը պահպանելու և շրջակա միջավայրի սանիտարա-հիգիենիկ պատշաճ վիճակը ապահովելու համար անհրաժեշտ է կատարել անընդհատ մեծածավալ աշխատանքներ հոսակորուստների հայտնաբերման և վերացման ուղղությամբ:

**Աղյուսակ Ա.3.5.2.1.**

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Պահանջվող ներդրումների մեծությունը մլն. դրամով
1	2	3
1	Հոսակորուստների վերացում 2020-2030թթ.	95.0
2	Կոյուղու ցանցի վերակառուցում	2200.0
3	<b>Ը ն դ ա մ ե ն ը՝</b>	2295.0

Համաձայն ՀԶԾՂԳ ուսումնասիրության Նոր Նորք վարչական շրջանի կոյուղու համակարգը անհրաժեշտ թողունակությամբ գոյություն ունի, միայն անհրաժեշտ են վերականգնողական աշխատանքները: Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ առանց այդ վերականգնողական աշխատանքների համակարգը կարող է վթարվել և դառնալ անկառավարելի:

Այս հանգամանքը պայմանավորված է նրանով, որ գործող կոյուղու համակարգը ունի բավարար թողունակություն և այդ առումով բավարարում է համայնքի պահանջը թե այսօրվա, թե հաշվարկային հեռանկարում: Ռիստի ներդրումները պետք է կատարվեն միայն համակարգը պատշաճ տեխնիկական վիճակի բերելու համար.

- Կոյուղու ցանցերի հոսակորուստների հայտնաբերում և վերացում,
- Աշխատանքային ռեսուրսը սպառած կոյուղագծերի վերակառուցում:

Համակարգի զարգացման համար նախատեսված գումարները պետք է բաժանել փուլերի:

Վարչական շրջանում հեղեղատար կոլեկտորներով ապահովված են միայն որոշ կենտրոնական փողոցները: Հեղեղատար կոլեկտորների տեխնիկական վիճակը շատ ցածր է: Բազմաթիվ կետերում ցանց է լցվում ֆեկալ կոյուղաջրեր:

Վատ շահագործելու հետևանքով ցանցը տեղ-տեղ խցանված է բերվածքներով:

Նոր Նորքի անձրևաջրերի և հալոցքի ջրերի ջրընդունիչ ծառայում են տարածքով անցնող ձորակները, որտեղից էլ կեղտաջրերը թափվում են Գետառ և Ջրվեժ գետերը:

Այս հանգամանքը թելադրում է, որ գետի հունը անհապաղ պետք է ազատել ջրի ազատ հոսքին խանգարող կառույցներից:

Համաձայն նախորդ տարիներին կառավարության կողմից հաստատված սխեմաների հալոցքները և անձրևաջրերը ջրավազաններ են նետվում առանց որևէ մաքրման: Այս խնդիրը լուծելու և ՇՆ և Կ 2.04.03-85-ի 1.2 կետի պահանջը հնարավոր է ապահովել հետևյալ տարբերակներով.

1. Յուրքանյուր թողարկի, կամ մի քանի թողարկ միավորող թողարկի վրա նախատեսել մաքրման կայան,

Հեղեղատար կոյուղին պետք է ընդգրկի համայնքի ամբողջ տարածքը:

Համաձայն Նոր Նորք համայնքի հատակագծի թաղամասերի փողոցներով լրացուցիչ պետք է կառուցել առնվազն ևս մոտ 23կմ կոլեկտորներ ;3004;700մմ տրամագծով՝ չհաշված բակային ցանցը:

Ինչպես վերը նշվեց գործող հեղեղատար կոյուղու տեխնիկական վիճակը շատ ցածր է կախված շինարարական որակից, շահագործման ցածր մակարդակից և գործող խողովակաշարերի տարիքից: Խողովակաշարերի տարիքի մասին ստույգ տվյալներ չկան, սակայն ակնհայտ է, որ 50-60% տարիքը գերազանցում է 30 տարին:

Հեղեղատար կոյուղու կոլեկտորների կտրվածքի հաշվարկը պետք է կատարվի համաձայն ՇՆ և Կ 2.04.03-85-ի 2.11-2.19 կետերի:

Համայնքի հեղեղատար ցանցերի զարգացման և ընդարձակման ծրագրի իրագործման համար, պետք է կատարվեն հետևյալ աշխատանքները ըստ առաջնահերթության.

- գործող ցանցի մաքրում բերվածքներից,
- գործող ցանցի վերանորոգում և հոսակորուստների վերացում,
- վերակառուցվող ճանապարհներով և մայրուղիներով նոր կոլեկտորների շինարարություն,
- կենցաղային կոյուղու միացման կետերի
- նոր կոլեկտորների շինարարություն ցածրադիր թաղամասերում կուտակվող ջրերը հեռացնելու համար և բակային ցանցեր,

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Պահանջվող գումարը մլն. դրամ ընդամենը
1	2	3
1	Գործող ցանցերի մաքրում բերվածքներից	1.5
2	Գործող ցանցի վերանորոգման և հոսակորուստների վերացում	14.5
3	Նոր կոլեկտորների կառուցում	1840.0
4	Հեղեղաջրերի մեխանիկական մաքրման կայանի շինարարություն	728.0
	<b>Ը ն դ ա մ ե ն ը՝</b>	<b>2584.0</b>

### 3.5.3.Ջերմամատակարարում

Երևան քաղաքի Նոր-Նորք վարչական շրջանի ջերմամատակարարման համակարգի վերակառուցման ուղղությամբ ներկայումս ընթանում են ոչ մեծ ծավալի որոշակի աշխատանքներ: Վերակառուցվել և աշխատում են մի շարք մանկապարտեզների, ուսումնական, մշակութային, վարչական և այլ օբյեկտների համակարգեր: Բարձիթողի վիճակում են բազմաբնակարան շենքերի ջերմամատակարարման վերակառուցումը: Եթե առաջինները հիմնականում իրականացվել են բյուջետային հատկացումների միջոցներով, ապա բնակելի շենքերի ջերմամատակարարման համակարգերի վերականգնում չի իրականացվում: Միայն նոր կառուցվող որոշ շենքերում իրականացվում է լրկալ կաթսայատներ միայն տվյալ շենքի կամ մի քանի շենքերի ջերմամատակարարման և տաք ջրամատակարարման համար:

Մինչև գլխավոր հատակագծի մշակման ժամանակ նախատեսվել էր,

1. կաթսայատներում հիմնանորոգումից հետո տեղակայել ժամանակակից գազային կաթսաներ ժամանակակից կաթսայական սարքավորումներով,
2. մայրուղաին և բաշխիչ ցանցերի հիմնանորոգում,
3. ԿՋՀ-ների շենքերի հիմնանորոգում և սարքավորումների փոխարինում,
4. համակարգին միացված բոլոր շենքերի ջերմային մուտքերի կահավորում և համապատասխան ջերմության առաքման կարգավորման սարքերի տեղադրում,

Նոր-Նորք վարչական շրջանում մինչև 1992թ. գործում էր 2 կենտրոնական շրջանային կաթսայատներ, որոնց աշխատանքի վերականգնման համար հաշվարկված էր ներդրումների չափը, որը կազմում էր 7.4-8.4 մլն. ԱՄՆ դոլարի չափով:

### 3.5.4. Գազամատակարարում

Երևան քաղաքի Նոր-Նորք վարչական շրջանում գոյություն ունեցող գազամատակարարման համակարգը կազմված է՝



1. մ/ճ և ց/ճ գազաբաշխիչ ցանցից,
2. գազակարգավորման կետերից (ԳԿԿ, ՊԳԿ),
3. էլեկտրաքիմիական պաշտպանության կայաններից (ԷՊՔԿ):

Նոր-Նորք, ինչպես նաև Կենտրոն վարչական շրջաններում գոյություն ունեցող միջին ճնշման գազատար ցանցերում առանձնապես փոփոխություններ տեղի չեն ունեցել և եղած համակարգը չի կարող բավարարել, քանի որ Նոր-Նորք վարչական շրջանը, որտեղ նակինում ջերմամատակարարումը իրականացվում էր շրջանային, ջերմային 2 հզոր կայաններից և կենտրոնական կաթսայատներից, հիմա փոխարինվել է բնակարանային անհատական ջերմամատակարարման համակարգով, որի արդյունքում մեծացել է գազի պահանջարկը թաղամասում և անհրաժեշտ է վերանայել մ/ճ գազատարների թողունակությունը: Լուծումները տեխնիկա-տնտեսական հիմնավորումներով հնարավոր կլինի իրականացնել թաղամասի գազաբաշխման համակարգերի վերահաշվարկման և նախագծման ժամանակ, հավանաբար կպահանջվի կառուցել նոր միջին և ցածր ճնշման գազատարներ:

Արդյունաբերության ոլորտում բնական գազի պահանջարկի կանխատեսում ներկայումս հնարավոր չէ, քանի որ չկա արդյունաբերության զարգացման կոնկրետ հեռանկարային ծրագիր: Հայտնի չէ, թե արդյունաբերության որ ճյուղերը ինչ չափով կզարգանան, ինչ արտադրատեսակներ կլինեն, ինչ ծավալներով:

### 3.5.5. Էլեկտրամատակարարում

Նոր Նորք համայնքի էլեկտրամատակարարման հիմնական աղբյուրն է հանդիսանում 110/10կՎ Նորք ենթակայանը: 10կՎ բաշխիչ ցանցը մալուխային է և կառուցված է "Սնող կենտրոնի 10կՎ ԲՍ-10ԿՎ բաշխիչ կետ -10/0.4կՎ ենթակայան՝ սխեմայով: Գործող ցանցի հիմնական ցուցանիշները ամփոփագրված են աղյուսակներում:

#### Նոր նորք Վարչական շրջանի էլեկտրամատակարարում սնող կենտրոններ

##### Աղյուսակ Ա. 3.5.5.1

Անվանում	Լարում, կՎ	Հզորություն մՎԱ	Մնուցում	Սնող օղային գծեր
Մարաշ	220/110	1x250+1x125	1.Հրազդան ՋԷԿ 2.Հայկական ԱԷԿ	1.Մարաշ-(ԱՍՕ-400)-62.5կմ 2.Մուսալեռ--(ԱՍՕ-400)-58.5կմ
Նորք	110/10	2x25	1.Մարաշ 2.Մարաշ	1.Կիրզա1-(ԱՍ-150)-4.2կմ 2.Կիրզա2--(ԱՍ-150)-4.2կմ
Ջրվեժ	110/10	1x16+1x40	1.Մարաշ 2.Մարաշ	1.Չեյթուն1-(ԱՍ-150)-5.6կմ 2.Չեյթուն2--(ԱՍ-150)-5.6կմ

**10/0.4 կՎ ենթակայանների հաշվառման աղյուսակ**

**Աղյուսակ Ա.3.5.5.2**

1- տրանսֆորմատորային հատ	2- տրանսֆորմատորային հատ	3- տրանսֆորմատորային հատ	Ենթակայանների ընդհանուր քանակը
38	99	3	140

**Տեղադրված տրանսֆորմատորային հզորությունների աղյուսակ**

**Աղյուսակ Ա.3.5.5.3.**

100կՎ Ա հատ	160կՎ Ա հատ	250կՎ Ա հատ	320կՎ Ա հատ	400կՎ Ա հատ	630կՎ Ա հատ	1000կՎ Ա հատ	Տրանսֆորմատորների ընդհանուր քանակը հատ	Ընդհանուր տեղադրված հզորություն մՎԱ
1	6	35	1	118	84	4	249	114.25

**3.6.Կանաչապատման համակարգը**

2023 թ. համայնքի բնակչության կանխատեսվող թվաքանակի պայմաններում /133.2 հազ. մարդ/ ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկներով բնակչության ապահովման դեֆիցիտը կկազմի 75.53 հա կամ 5.731 մ<sup>2</sup>/մարդ:

Նոր Նորքի կանաչապատման համակարգի կայուն զարգացման համար անհրաժեշտ է իրականացնել գործողությունների համալիր ծրագիր, որն իր մեջ կպարունակի ներքոհիշյալ հիմնադրույթները՝

- բնագավառի գործունեությունը համակարգող մասնագիտացված կառուցվածքային ստորաբաժանման ստեղծում համայնքապետարանում,
- վերականգնման աշխատանքների, նոր տարածքների կանաչապատման իրականացում, հստակ նախագծերին և ծրագրերին համապատասխան, ապահովելով հետագա ոռոգումը,
- ոռոգման համակարգի զարգացում և բարեփոխում:

Նախատեսված են այգիներ, սպորտ-հրապարակներ՝ կանաչ գոտիով, շրջանային նշանակության կանաչ գոտիներ և այլն: Բացի դրանից նախատեսված է նաև մագիստրալ ճանապարհների և այլ օբյեկտների պահպանության գոտիների կանաչապատում: Նախատեսվում են տարեկան 3500 հատ ծառերի և թփերի տնկման աշխատանքներ, ինչպես նաև հուշարձանների հարակից տարածքների պահպանում և խնամք:

Նախագծով նախատեսված է ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքը 119.61 հա:

### **3.7. Հողօգտագործման արդի վիճակը**

Նոր Նորք վարչական շրջանը զգալի մասը կառուցապատված է 7-9 բազմահարկանի բնակելի տներով և որոշ հատվածներում՝ 4-5 և 12-16 բազմաբնակարան շենքերով: Կա նաև մեծ մակերեսով անհատական տների կառուցապատմամբ գոտի: Հողային տարածքների մեծ մասը սեփականաշնորհված է: Գլխավոր հատակագծի իրացման ժամանակներում նկատվել են ապօրինի հողազավթումներ. առանձին տնամերձ հողամասեր են ցանկապատվում, խոչընդոտելով Երևանի գլխավոր հատակագծում նախատեսված նոր կարևոր փողոցների և ճանապարհների անցկացմանը:

**Բազմաբնակարան բնակարանային ֆոնդի ներկա վիճակը:** Բազմաբնակարան բնակարանային ֆոնդի գերակշիռ մասի տարիքը Նոր Նորքում 30 տարուց ավելի է: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հիմնականում բազմաբնակարան բնակարանային ֆոնդի կառավարման և շահագործման գործառույթները չեն իրականացվել համապատասխան մակարդակով, արդեն իսկ հիմնանորոգման կարիք ունեն մուտքերը, տանիքները և այլն: Միաժամանակ ՀՀ կառավարության որոշման համաձայն, բազմաբնակարան շենքերի տեխնիկական ուսումնասիրությունները պետք է կատարվեն պարբերաբար, բայց ոչ ուշ, քան յուրաքանչյուր 10 տարին մեկ անգամ, սակայն ֆինանսական միջոցների սղության պատճառով բազմաբնակարան շենքերի մեծ մասի մոտ չի իրականացվել տեխնիկական վիճակի ուսումնասիրություն: Իսկ տեխնիկական վիճակը ներկայացնող փաստաթղթի բացակայությունը բացասաբար է ազդում հետագա կառավարման և շահագործման գործառույթների արդյունավետ իրականացման վրա:

**Բնակարանային ֆոնդի տեխնիկական վիճակը:** Բազմաբնակարան բնակֆոնդի շենքերի պատյանները, այդ թվում ճակատային մասը, հանդիսանալով ընդհանուր բաժնային սեփականություն, գրեթե ամենուրեք վատթար վիճակում են: Տանիքների և դրանց ջրահեռացման համակարգերի նորոգման էլ ավելի հրատապ անհրաժեշտության պատճառով շենքերի պատյանների վերականգնման հարցին առայժմ ոչ մի առաջնայնություն չի տրվել: Տանիքների և դրանց ջրահեռացման համակարգերի առնվազն 75%-ը անհետաձգելի նորոգման կարիք ունի: Բազմաբնակարան շենքերի մոտ 60%-ում մուտքերի և աստիճանավանդակների վերանորոգման կարիք է զգացվում: Խնդրահարույց է հատկապես մուտքերին հարող տարածքների և շենքերի ճակատների հանդեպ վարմունքը գազի, էլեկտրականության և ջրի մատակարարների կողմից: Ընդհանուր առմամբ, կարելի է արձանագրել, որ բազմաբնակարան բնակելի շենքերով կառուցապատված գոտիները կարիք ունեն բարեկարգման կամ մասնակի կամ ամբողջական վերակառուցման:

2002 - 2024 թթ. ընկած ժամանակահատվածում վարչական շրջանի հյուսիս-արևելյան հատվածում առաջարկվել են բազմաթիվ հողահատկացումներ՝ բնակելի կառուցապատման համար, որոնք ներկայումս հիմնականում իրականացվել են: Մասնավորապես, արվել են

հողատհատկացումներ անհատական կառուցապատման համար, բազմահարկ շենքերի համար, կառուցվել են հասարակական բնույթի կառույցներ, վերակառուցվել առողջապահական հինարկություններ: Գրանցված արտադրական գոտիները գործարկվում են մասամբ:

### **3.8. Հատկազատարածական կազմակերպում, գոտիավորման և կառուցապատման հայեցակարգ**

Նախագծի հայեցակարգային դրույթները և հիմնական ուղղությունները բխում են Երևանի հաստատված գլխավոր հատկազծի նախագծի հիմնական դրույթներից:

Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի տարածքի գոտիավորման նախագիծը մշակված է.

- գոյություն ունեցող տարածքի սահմանների շրջանակում,
- տարածքային սկզբունքով, որի մեջ պարունակված է խնդիրների լուծման այլընտրականությունը՝ սեփականության բոլոր ձևերի նկատմամբ,
- տարածքի հողօգտագործման արդյունավետության բարձրացումը քաղաքի հատկազծային համակարգում,
- կայուն զարգացման սկզբունքներից ելնելով, պահպանելով սոցիալական, տնտեսական և էկոլոգիական ոլորտների պահանջների հաշվեկշիռը:

Նախագծի հիմնական խնդիրներն են՝

- հատկազծային կառուցվածքի բարելավումը, տարածական ամբողջականության և գործառույթների ռացիոնալ բաշխման ապահովումը,
- բնակելի պայմանների բարելավումը, բնակելի ֆոնդի հուսալիության և անվտանգության բարձրացումը,
- բնակչության սպասարկման համակարգի բարելավումը,
- պատմամշակութային ժառանգության պահպանումը
- բնության ամբողջականության վերականգնումը, էկոլոգիական ռիսկի նվազեցումը,
- տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների բարելավումը և դրանց շահագործման հուսալիության ու անվտանգության ապահովումը:

Սակայն, ելնելով դիտազննումներից և հողատհատկացումների վերլուծությունից, և նպատակ ունենալով ապահովել տվյալ տարածքում գործառական նպատակահարմարություն, նախագծով առաջարկվել է.

- Բազմաբնակարան համալիր կառուցապատում նախատեսել 1960-1970-ական թվ-ին կառուցված և շահագործման ժամկետն անցած բազմաբնակարան բնակելի միավորներով կառուցապատված գոտիներում: Մասնավորապես, առաջարկվում են համալիր վերակառուցման/իրացման գոտիներ.

- Նորքի 1-ին զանգվածի աջ հատվածում՝ Ֆ.Նանսեն և Լվոյան փողոներով եզերված հատվածում՝ 25 հա տարածք:
    - Նորքի 1-ին զանգվածի ձախ հատվածում՝ Ֆ.Նանսեն և Ջուլայի փողոներով եզերված հատվածում՝ 19.5 հա տարածք:
    - Նորքի 2-րդ զանգված՝ Մոլդովական և Ստեփանյան փողոներով եզերված հատվածում՝ 11 հա տարածք:
    - Նորքի 2-րդ զանգված՝ Վ.Թոթովենց- Մոլդովական-Ստեփանյան փողոներով եզերված հատվածում՝ 13 հա տարածք:
    - Նորքի 4-րդ զանգված՝ Ա.Բակունց-Գյուլիքևսյան-Հովհաննիսյան փողոներով եզերված հատվածում՝ 11 հա տարածք:
- Այս թաղամասերում առանցքային են դարձել և դիտարկվող շրջանի համար նորովի շեշտադրվում են հետևյալ դրույթները.

- Գլխավոր հատակագծի հաստատումից մինչ օրս ընկած ժամանակահատվածում իրականացված հողահատկացումների և կառուցապատված տարածքների ենթակառուցվածքային կազմակերպումը,
  - Բակային տարածքների բարեկարգումը ու դրանց վերակազմավորումը՝ բակային ստորգետյա տարածքների յուրացմամբ և այնտեղ ավտոկայանատեղերի կազմակերպմամբ,
  - Մանկական խաղահրապարակների կազմակերպումը
  - Հետիոտն անցուղիների կազմակերպումը
  - Կանաչապատ հանրային տարածքների ավելացումը՝ (կանաչապատ առաջարկվող մակերեսները զբաղեցնում են մոտ 60.8 հա)
  - Սպորտային հրապարակների նախատեսումը
  - Ճանապահափողոցային ցանցի կազմակերպումը և առանցքային հատվածների կարմիր գծերի սահմանումը:
  - Արտադրական գոտիների, մասնավորապես հանքերի վերաբերյալ մասնակի գործառական փոխակերպումներ են նախատեսվում:
  - Երևան քաղաքի մինչև 2020թ. Գլխավոր հատակագծով նախատեսված է կառուցել հասարակական զուգարաններ: Համաձայն վերոնշյալ նախագծի հասարակական զուգարաններ տեղաբաշխման ծրագրի և սխեմայի, Նոր Նորք վարչական շրջանում ևս կառուցել հասարակական զուգարաններ: Տվյալ նախագծով դրանք առաջարկվում է նախատեսել նոր խառը կառուցապատման գոտիներում և ստորգետյա հատվածներում:
- Բացի այդ, նախկինից անավարտ մնացած և ներկայումս փլուզված վիճակում գտնվող կամուրջի տարածքում նախատեսվում է նոր բազմամակարդակ ուղեբաժանք՝ Գայի պողոտայի վերջնամասի հատվածում, որը պետք ապահովի անընդհատ կապ Գայի պողոտայի և Բ. Մուրադյան փողոցների միջև: Ստորին հատվածում տեղակայված Թևոսյան փողոցը շարունակվում է դեպի Երևանի

2005-2020 թ. Գլխավոր հատակագծով նախատեսված համաքաղաքային նշանակության մայրուղուն:

Շոպրոնի-Ա. Միկոյան – Բ. Մուրդյան փողոցների հատույթում նախատեսվում է շրջանաձև շարժման կազմակերպում:

Որպես Նոր Նորքի փողոցատրանսպորտային ցանցի թեթևացման միջոց է առաջարկվում ճոպանողու կայանի տեղակայում Գայի պողոտային հարակից հատվածում, որն անհրաժեշտ է ռեզերվացնել հետագա օգտագործման համար, ինչպես նաև ճոպանուղու ծրագծի իրագործման ապահովման համապատասխան շերտը:

### 3.9. Նոր Նորք վարչական շրջանի հողերի փաստացի օգտագործման և նախագծային հաշվեկշիռները

Ստորև ներկայացված է Նոր Նորք վարչական շրջանի հողերի փաստացի օգտագործման հաշվեկշիռը:

#### ՀՈՂԵՐԻ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՇՎԵՔԵԻՌԸ (ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ)

##### Աղյուսակ Ա.3.5.2.1.

NN	ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ	ՀՈՂԱՏԵՍԱԿ, ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ	ՔՐՈՒՔ	
1	2	3	4	
1.1	Գյուղատնտեսական հողեր	<i>վարելահող</i>	<b>0.0</b>	
1.2		<i>բազմամյա տնկարկներ</i>	<b>0.0</b>	
		<i>որից՝</i>		
1.2.1		պտղատու այգի	0.0	
1.2.2		խաղողի այգի	0.0	
1.3		<i>արոտ</i>	<b>0.0</b>	
1.4		<i>այլ հողատեսքեր</i>	<b>0.0</b>	
<b>1</b>		<b>Ընդամենը</b>	<b>0.0</b>	
2.1		Բնակավայրի հողեր	<i>բնակելի կառուցապատում</i>	<b>284.39</b>
			<i>որից՝</i>	
2.1.1	Բնակելի (տնամերձ)		185.12	
2.1.2	Բնակելի (բազմաբնակարան կառուցապատում)		99.27	
2.1.3	այգեգործական		0.0	
2.2	<i>Հասարակական կառուցապատում</i>		<b>124.07</b>	
	<i>որից՝</i>			
2.2.1	Վարչական օբյեկտների		1.58	
2.2.2	Կրթական		54.86	
2.2.3	Սոցիալական սպասարկման և արևտրի		60.71	
2.2.4	Բուժական հաստատությունների	5.94		

2.2.5		Մշակութային և ժամանցային օբյեկտների	0.18
2.2.6		Մարզային օբյեկտների	0.80
2.3		<b>Խառը կառուցապատում</b>	<b>89.95</b>
2.4		<b>Ընդհանուր օգտագործման</b>	<b>346.21</b>
		<i>որից՝</i>	
2.4.1		Զբոսայգիներ, պուրակներ, այլ կանաչ տարածքներ	58.80
2.4.2		Փողոցներ, ճանապարհներ, հրապարակներ	75.60
2.4.3		Ընդհանուր օգտագործման այլ տարածքներ	211.18
2.5		<b>Այլ հողեր</b>	<b>332.02</b>
<b>2</b>		<b>Ընդամենը</b>	<b>1176.64</b>
3.1	Արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտ. նշանակ. օբյեկտների հողեր	<b>արդյունաբերական</b>	<b>132.02</b>
3.2		<b>ընդերքօգտագործման</b>	<b>43.72</b>
<b>3</b>		<b>Ընդամենը</b>	<b>175.74</b>
4.1	Էներգետիկայի, Կապի Տրանսպորտի և Կոմունալ ենթ. օբյեկտների հեղեր	<b>էներգետիկայի</b>	<b>8.28</b>
4.2		<b>կապի</b>	<b>0.15</b>
4.3		<b>կոմունալ ենթակառուցվածքների</b>	<b>8.14</b>
		<i>որից՝</i>	
4.3.1		կոմունալ	8.14
4.3.2		կոմունալ (գերեզմանոցներ)	0.00
4.4		<b>տրանսպորտի</b>	<b>10.66</b>
<b>4</b>		<b>Ընդամենը</b>	<b>27.23</b>
5.1	Հատուկ պահպանվող տարածքների հողեր	<b>Հանգստի համար նախատեսված</b>	<b>12.35</b>
5.2		<b>Պատմական և մշակութային</b>	<b>1.41</b>
<b>5</b>		<b>Ընդամենը</b>	<b>13.76</b>
6	Հատուկ նշանակության հողեր	<b>Ընդամենը</b>	<b>65.36</b>
7	Անտառային հողեր	<b>Ընդամենը</b>	<b>0.0</b>
8	Ջրային հողեր	<b>Ընդամենը</b>	<b>0.30</b>
9	Պահուստային հողեր	<b>Ընդամենը</b>	<b>0.0</b>
<b>ԸՆԴԱՄԵՆԸ ՀՈՂԵՐ</b>			<b>1459.03</b>

**Աղյուսակ 3.9.2.-ում ներկայացված է** Նոր Նորք վարչական շրջանի հողերի հեռանկարային օգտագործման հաշվեկշիռը:

### ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՇՎԵՔՇԻՈՒԸ (ՀԵՌԱՆԿՐԱՅԻՆ)

Աղյուսակ Ա. 3.9.2

NN	ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ	ՀՈՂԱՏԵՍԱԿ, ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ	ԺՆՈՒՄ
1	2	3	4
1.1	Գյուղատնտեսական հողեր	<b>վարելահող</b>	<b>0.0</b>
1.2		<b>բազմամյա տնկարկներ</b>	<b>0.0</b>
		<i>որից՝</i>	
1.2.1		պտղատու այգի	0.0

1.2.2		խաղողի այգի	0.0
1.3		<i>արոս</i>	<b>0.0</b>
1.4		<i>այլ հողատեսքեր</i>	<b>0.0</b>
<b>1</b>		<b>Ընդամենը</b>	<b>0.0</b>
2.1	<b>Բնակավայրի հողեր</b>	<b>բնակելի կառուցապատում</b>	<b>362.34</b>
		<i>որից՝</i>	
2.1.1		Բնակելի (տնամերձ)	185.12
2.1.2		Բնակելի (բազմաբնակարան կառուցապատում)	177.22
2.1.3		այգեգործական	0.0
2.2		<b>Հասարակական կառուցապատում</b>	<b>127.40</b>
		<i>որից՝</i>	
2.2.1		Վարչական օբյեկտների	1.58
2.2.2		Կրթական	54.86
2.2.3		Սոցիալական սպասարկման և արևտրի	64.04
